ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

ԵՊՀ ԻՄՏՆ տեսագիտության փակուլտետի գիտխորհրդի նիստի

18.03.2024թ. ք.Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում են գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա.Ալեքսանյանը, Գ.Սիրոյանը, Գ.Հովհաննիսյանը, Թ. Վարդանյանը, Ա.Պոտոսյանը, Ա.Մուրադյանը, Ա.Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, փակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Զանվելյանը, ՈՒԳ նախագահ Ի. Բադիրյանը, Հ. Սանթրոսյանը, Զ. Հարությունյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների քննարկման մասին (զեկ. Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):
2. 2023-2024 ուստարվա առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկների քննարկման մասին (զեկ. Ա. Մարգարյան):
3. 2023-2024 ուստարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության գրաֆիկների հաստատման մասին (զեկ. Ա. Մարգարյան):

**1. Լսեցին.-Հաղորդում առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին (զեկ. Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):**

Գ. Սիրոյանը հաղորդեց, որ ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հարցերը քննարկվել են ամբիոնում: Դասախոսներին և չորրորդ /առկա/ և հինգերորդ /հեռակա/ կուրսի ուսանողներին հանձնարարվել է առաջնորդվել «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի

պատրաստման և գնահատման կարգ»-ով (25.12.2020թ., ամբիոնի նիստի 48/6 որոշում):

Ավարտական աշխատանքի ղեկավարները ամբիոնում հաստատված գրաֆիկի համաձայն խորհրդատվություն են իրականացրել ուսանողների հետ:Խորհրդատվության արդյունքում.

- ճշգրտվել են ավարտական աշխատանքների կառուցվածքը և պլանը,կատարման ժամկետները,
- առաջարկվել է գրականության ցանկ,
- կատարվել է տեսական նյութերի վերլուծություն և ամփոփում, գրականության վերլուծություն և նախնական տարբերակի ներկայացում ղեկավարին:

Ընդհանուր առմամբ առկա ուսուցման համակարգում խնդիրներ չկան /առանձին ուսանողներ ժամկետները խախտել են,բայց դրանք մտահոգող չեն/:

Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողները ստացել են իրենց թեմաները, սակայն ոչ բոլոր ուսանողներն են հանդիպել ղեկավարների հետ:Որոշ ուսանողներ ղեկավարների հետ լիարժեք չեն աշխատում:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ առկա ուսուցման ուսանողների հիմնական մասի մոտ աշխատանքներն 80 %-ով պատրաստ են: Ուսանողներն առաջնորդվում են ըստ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգի: Այժմ իրականացնում են ավարտական աշխատանքների տեխնիկական շտկումները:

Հեռակա ուսուցման ուսանողները պարբերաբար հանդիպում են իրենց ղեկավարներին: Տրված են ավարտական աշխատանքների բովանդակությունները, գրականության ցանկերը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

**Որոշում.- Հաղորդումն առկա և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին ընդունել ի գիտություն:**

2. **Լսեցին.- 2023-2024 ուստարվա II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկների քննարկման մասին (զեկ. Ա. Մարգարյան):**

Ա. Մարգարյանը հաղորդեց II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին, մասնավորապես նշելով, որ ժամակացույցից որևէ շեղում տեղի չի ունեցել: Դեկանի պաշտոնակատարը նշեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների օրերը բաշխվել են նկատի ունենալով դասախոսների դասացուցակները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

**Որոշեցին. -II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների և ժամանակացույցերի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:**

3. **Լսեցին.- 2023-2024 ուստարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության գրաֆիկների հաստատման մասին/ զեկ. Ա. Մարգարյան/:**

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ ուսանողի կողմից բակալավրի կրթական ծրագրի ելքային

արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Հաջողված ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության իրականացման համար կարևոր է ավարտական աշխատանքների նախապաշտպանության կազմակերպումն և անցկացումը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու և շտկելու առկա բացթողումները:

Ա. Մարգարյանը ներկայացրեց 2023-2024 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության և նախապաշտպանության գրաֆիկները.

ա

| | Ֆինանսներ (ըստ ոլորտի) | | Զբոսաշրջություն | |
|---|---|---|---|---|
| | առկա | Հեռակա | առկա | Հեռակա |
| Ավարտական աշխատանքի պաշտպանություն | 18.05.2024 | 15.06.2024 | 11.05.2023 | 15.06.2024 |
| Ավարտական աշխատանքի նախապաշտպանություն | 20.04.2024 | 18.05 .2024 | 19.04.2023 | 31.05.2024 |
| Ավարտական աշխատանքի հանձնում ամբիոն | մինչև 04.05.2024 | մինչև 01.06.2024 | մինչև 30.04.2024 | մինչև 01.06.2024 |

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

**Որոշեցին.- Հավանություն տալ 2023-2024 ուստարվա ավարտական կուրսերի ավարտական աշխատանքների նախապաշտպանության և պաշտպանության գրաֆիկներին և ներկայացնել տնօրենի հաստատմանը:**

**Գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան**
**Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան**